

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

19.03.2013թ.

գ. Անիավան

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի «Վարչական հսկողության 2013 թվականի աշխատանքային ծրագիրը հասատատելու մասին» թիվ 190-Ա հրամանի և ի կատարումն ՀՀ Շիրակի մարզպետի 2013 թվականի փետրվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիավան համայնքում վարչական հսկողություն իրականացնելու մասին» թիվ 14 կարգադրության, աշխատանքային խումբը մասնակցությամբ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյանի /խմբի ղեկավար/, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Զարիկ Մուրադյանի /խմբի անդամ/, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Հուրիկ Մարտիրոսյանի /խմբի անդամ/, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հարությունյանի /խմբի անդամ/, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ Հայկ Սարգսյանի /խմբի անդամ/, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի առաջատար մասնագետ Օֆելյա Ավագյանի /խմբի անդամ/, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) առաջին կարգի մասնագետ Օֆելյա Մխիթարյանի /խմբի անդամ/, ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզի Անիավանի գյուղական համայնքի ղեկավար Մարտիրոս Միրոյանի, Անիավանի համայնքում իրականացրել է վարչական հսկողություն, որն ընդգրկել է 2010 թվականի մարտի 1-ից մինչև 2013 թվականի մարտի 1-ն ընկած ժամանակաշրջանը:

Վարչական հսկողությունն սկսվել է 2013 թվականի մարտի 5-ին և ավարտվել՝ 2013 թվականի մարտի 12-ին:

Վարչական հսկողության արդյունքում պարզվել է հետևյալը՝

- 1) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ համայնքի ավագանին ընդունել է իր կանոնակարգը /ավագանու որոշում՝ 20.11.2012թ. թիվ 11-Ն/:
 - 2) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ համայնքի ավագանին հաստատել է համայնքի 2009-2012թթ. զարգացման ծրագիրը /ավագանու որոշում՝ 23.02.2009 թ. թիվ 3-Ն/:
- Համայնքի զարգացման քառամյա ծրագրում ներառված թվով 4 ծրագրային աշխատանքներից կատարվել են բոլորը: «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի» (ԻՖԱԴԻ) ֆինանսավորմամբ և համայնքի կողմից կատարված ներդրումների միջոցով